

Գեղարքունիքի մարզպետը Մեւանի տարածաշրջանում դիտարկեց շինարարական աշխատանքների ընթացքը

18.08.2016

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Մեւանի տարածաշրջան կատարած աշխատանքային այցի շրջանակներում դիտարկեց դպրոցական եւ նախադպրոցական առանձին հաստատություններում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքը: Մարզպետի այցի առաջին կանգառը Մեւան քաղաքի համար 1 հիմնական դպրոցն էր: Այստեղ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախորդ տարի իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, իսկ այս տարի նույն միջոցների հաշվին դպրոցում անցկացվում է ջեռուցման ընդհանուր համակարգ: Իրականացվող աշխատանքների վերաբերյալ մարզի ղեկավարը տվեց ցուցումներ և հանձնարարականներ, նշելով, որ հաջորդ տարի, ֆինանսական միջոցների առկայության դեպքում, հնարավոր կլինի ավարտին հասցնել դպրոցում կիսատ մնացած աշխատանքները: Ռաֆիկ Գրիգորյանն այնուհետև այցելեց Գեղամավան և Դոմաշեն համայնքներ, որտեղ ծանոթացավ մանկապարտեզներում իրականացվող վերանորոգման աշխատանքներին: ՀՀ Տարածքային Չարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ Գեղամավան համայնքում նախորդ տարիների ընթացքում իրականացվել են մանկապարտեզի 2 մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքները: Նույն հիմնադրամի ֆինանսավորմամբ այս տարի իրականացվում է մանկապարտեզի երրորդ մասնաշենքի վերանորոգումը: Հիմնադրամը հոգացել է նաև մանկապարտեզի գույքային և տեխնիկական հագեցվածության խնդիրը: Ըստ շինարարի՝ մոտ մեկ ամիս հետո 120 տեղանոց մանկապարտեզն ամբողջովին պատրաստ կլինի՝ ընդունելու համայնքի նախադպրոցական տարիքի սաներին: Դոմաշեն համայնքում մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը ծանոթացավ ՀՀ Տարածքային Չարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող մանկապարտեզի երրորդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների ընթացքին: Մանկապարտեզի 2 մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են նախորդ տարիների ընթացքում Գեղարքունիքի մարզին, հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների համար, պետության կողմից հատկացված ֆինանսական միջոցների հաշվին: 90-ականներից իր գործունեությունը դադարեցրած նախադպրոցական հաստատությունը մինչև նույնօր պատրաստ կլինի՝ ընդունելու իր սաներին: Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը շինարարական կառույցներում կատարած շրջայցից հետո առաջարկեց Գեղամավանի եւ Դոմաշենի գյուղապետերին՝ սկսել նախադպրոցական տարիքի երեխաների հավաքագրման գործընթացը և նրանց միջոցով նախապատրաստել ծրագիր՝ մանկապարտեզների բացման արարողությանը հանդիսավոր տեսք տալու համար: Մարզպետը նաև խորհուրդ տվեց համայնքների ղեկավարներին՝ նախադպրոցական հաստատություններում աշխատանքի ընդունել բացառապես բանիմաց, գրագետ ու փորձ ունեցող դաստիարակների, իսկ անհրաժեշտության դեպքում նրանց գործուղել վերապատրաստման: